Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Z-28

Printed in Turkey

Z-2

16647

ՅԱՅՏԱՊԻՐ

ԱՊԴԱՐԻՆ ԵԼՄՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

ԸՆԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1861 ԱՊՐԻԼ 1

ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՇՈՎՀԱՆՆՈՒ ՄՒՒՀԵՆՑԻՍԿԱՆ

361
Հ-29

2010

Z-48

Printed in Turkey

361
Z-29

5

ՅԱՅՏԱԳԻՐ

ՀՆԳԱՄՍԵԱՅ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԱՋԳԱՅԻՆ ԵԼՄՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

ԱՌ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1861 ԱՊՐԻԼ 1

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

ՀԱՅԿՈՍՏԱՏԻՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2002

78159

1237-87

Printed in Turkey

ԾԶԳԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԵՆՆ
ԵԼՄՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ
թիւ 48

ՅԱՅՏԱԳԻՐ

ՀՆԳԱՄՍԵԱՅ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵԼՄՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

ԱՌ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1861 տարւոյն Ազգային Սահմանադրական տարրեգլուխն եկաւ։ Երմտական խորհուրդը ուրիշ ամեն ժողովոց և խորհրդոց նման կիսով չափ նորոգուելէն առաջ կ'ուզէ Սահմանադրութեան նկատմամբ ունեցած պարտաւորութիւնները կատարել, և պաշտօնն սկսած օրէն մինչև այսօր ըրածները յայտագրելէն զատ, առաջիկայ տարւոյն մէջ Ազգին Երմտական վիճակին համար պատշաճ տեսած անօրինութիւնները առաջարկութեամբ ներկայացնել Քաղաքական ժողովին։

Երմտական խորհուրդին անդամոց ընտրութիւնը 1860 տարվան նոյեմբերի սկիզբը կատարուելով, նոյն ամսուն 18ին առաջին անդամ ժողով ընելու յաջողեցաւ. և այն օրէն մինչև այսօր գրեթէ ամեն շաբաթ մի անդամ կանոնաւոր ժողով ընելով, իր պաշտօնին կատարմանը, և մասնաւորաբար դրծին օրինաւոր կարգադրութեանն աշխատեցաւ։

Այսքան ժամանակի մէջ՝ որ տարուան մը շրջանին գրեթէ մէկ երրորդն է, Խորհուրդն իր պաշտօնատարութեան մէջ երկու կերպ ընթացք վարել պարտաւորեցաւ. որոնց առաջինը՝ 1860 Նոյեմբերի 18 էն սկսեալ՝ տեւեց մինչև դեկտեմբերի վերջը. իսկ միւսը տարւոյս առաջին օրէն սկսեալ կը շարունակէ մինչև այսօր։

Արդ՝ Խորհուրդն իր այս կրկին ընթացքը յայտագրելէն առաջ, կը պարտաւորի նախ՝ պաշտօնի սկսած օրը գործին գտնուած վիճակը նկարագրել. անկէ ետքը իր ըրածներն ու տեսածները յայտնելով, յայտագիրս պիտի վերջացնէ առաջիկայ տարւոյս համար ընելու առաջարկութիւններովը։

Ա.

Խորհուրդին պաշտօնի սկսած օրը՝ Ազգային Հիմնական Վիճակին Նկարագրութիւնը։

Հիմնական Խորհուրդը առաջին անգամ ժողով ընելուն տեսաւ որ Ազգին եկեւմուտքը իր արդար կշիռը կորուսեր է. և որ ցաւալին է, կանոնաւոր ոչ պնդութիւն մնացեր է, և ոչ համարակալութիւն։

Ազգային Պատրիարքարանի մէջ չորս սնտուկ սահմանուեր է, կամ լաւ և՝ այնպէս ենթադրուեր է. որոնք են

Ա. Սուրբ Փրկչի Հիւանդանոցին Սնտուկը. — Այսոր մէջ կը հաւաքուի եղեր հետեւեալ աղբիւրներէն եղած եկամուտը, և անկէ մատակարարուեր է Հիւանդանոցի ծախքը։

Նախկին Աղբիւրք Եկամտից Հիւանդանոցի Տնտուկին։

1. Թէսկիրէխանէյի հասոյթը։
2. Նշանտուքի բոլոր արդիւնքը։
3. Մոմարանի շահը։
4. Հիւանդանոցի սեփհական կալուածները։
5. Վախքֆի արդիւնքը։
6. Հայց 37 1/2 օխա օրական, Օսմանեան տէրութեան շնորհածը։
7. Միս 15 օխա օրական, Օսմանեան տէրութեան շնորհածը։
8. Տատեան գերդաստանին նուիրած միսին գինը։
9. Ըրմաշի վանքին կողմէն Սուրբ Փրկչի Հիւանդանոցին յատկացեալ տարեկան նուէրը։
10. Սուրբ Երուսաղէմի Միաբանութեան նուիրած տարեկանին մէկ մասը։
11. Կտակեալ նուէրք ողորմութեան։
12. Պատահական նուէրք, հացագին, հանդերձագին, շինութեան համար, և այլն։
13. Սուրբ Փրկչի մատրան և Սուրբ Յակոբ եկեղեցւոյ ներքին արդիւնքը։
14. Օանաղան հասոյթք. { Հիւանդանոց ընդունուողներէն առնուած դրան ծախք և ամսական։ Հիւանդանոցի մէջ ննջողներէն մնացած ստակ։ Հին կարասեաց վաճառքէն։ Մաքսի բեռնակիրներէն շնորհուած որոշեալ տարեկան, և այլն, և այլն։

Բ. Տնանկաց Տնտուկ.—Այսր մէջ կ'ամփոփուի եղեր տնանկաց սեփհական կալուածներէն և կտակեալ կամ պատահական ողորմութիւններէն եղած արդիւնքը, Սուրբ Երուսաղէմի Միաբանութեան նուիրած տարեկանին մէկ մասը, և Ազգային տուրքէն եղած հասոյթը. եւ ասկէ սահմանուեր է վճարել Տնանկաց և

Դպրոցաց համար զանազան թաղերու որոշուած օգնութիւնը, և Պատրիարքարանի պատուհական ծախքը։

Գ. Մամարանի Անուակ. — Այս տեսակին 160,000 զուրուշ դրամագլուխ յանձնուելով, մամարանի տուր և սուէն եղած արդիւնքը անոր մէջ գանձել որոշուեր է. և շահը տարուէ տարի Աղգային Հիւանդանոցին եկամուտ սահմանուեր է։

Այս Անուակներուն երեքին մէկէն գնորինոլիոնը նախկին Տնտեսական ժողովոյ անդամներէն անձնանուիրութեամբ հաշակեալ մէկ քանի անձինքը կատարեր են մինչև Սահմանադրութեան հրատարակումը. և գնորինոլիոնը յանձնուեր է Մոմճեան Սկրտչ Աղա գործակալին, որ միանգամայն գանձապահութեան և ըստ մասին գանձապետութեան գործն ալ ստեր է։ Իսկ համարակալոլիոնը երեք անուակին զատ զատ տուամար բռնուելու պայմանաւ յանձնուեր է գործակալ նոյն գործակալին և Թէլեան Պ. Կարապետ գրագրին։

Գ. Պատրիարքարանի Անուակ. — Այսր միայն անունը ըլլալով, ինքը իրապէս երբէք չէ կեցած. բայց գաւառներէն Աղաջնորդաց և Պատեհարաց վճռած տարեկանը և Պոլսոյ եկեղեցիներուն ամէն տարի տուած դրամական պարտքը Պատրիարքին յանձնուելով, նա կը հոգայ եղեր Պատրիարքարանի և իր անձնական ծախքը. անուակաց Անուակէն ալ իրեն օգնութիւն ըլլալով, և Հրամանքի արդիւնքն ալ գործածուալ ինք վայելելով։ Այս Անուակին մէջ պնպէսոլիոն եղած է և մէջ համարակալոլիոն։

Եղմնական Խարհուրդը այս Անուակներուն ելեւմտից վիճակը ստուգելու ուղելով գտաւ որ՝ միայն Սուրբ Փրկչի Հիւանդանոցին Հաշուետուութիւնը 1853 տարուայն վերջը քննուեր, և ժամանակին Վերագոյն Խորհրդոյ և Արքայական Պատրիարքին կնքուելը և ստորագրու-

Թեամբը վաւերացեր է. անկէ ասդին բնաւ մէկ տարվան հաշուետուումարները քննուած և վաւերացուած չեն։ Տնանկաց և Ամմարանի Անտուկներուն տուումարները երբէք չեն նայուեր և վաւերացուեր. իսկ Պատրիարքարանինը բնաւ կեցած չէ, ինչպէս արդէն զրուցեցինք։

Այս պարագային մէջ Ազգական Խորհուրդին կը մնար՝ կամ ասոնց ամէն մէկուն հաշիւները մանրամասն քննել և ստուգել, կամ ամենուն ալ վիճակը արձանագրելով իր համարառու ժողովին յայտնել, և հինը ձգելով ամէն բան նորէն կարգադրել։ Առաջինին համար պէտք էր ունենալ կանոնաւոր փոստարներ, համարաւոր պիսաներ և բաւական ժամանակ. ասոնց մէկին ալ չըլլալուն համար, Խորհուրդը պարտաւորեցաւ երկրորդը ընտրել, և իր գործին սկսիլ։

1860 Նոյեմբեր մէկին՝ վերոյիշեալ Անտուկներուն Հաշուետուումարներուն մէջ Հիւանդանոցի, Տնանկաց, և Ամմարանի արդիւնքները հետևեալ ցուցակին մէջ նշանակելով, այժմէն կ'իմացուենք որ,

1. Ամոր մէջ նշանակուած չեն Հիւանդանոցի համար դրամականէն զատ ազգայնոց ըրած նուէրները՝ ինչպէս են ուտելիք, հագնելիք, կարասիք, և այլն։

2. Տնանկաց անտուկին 1857էն առջի հաշիւները գրուած չըլլալուն պատճառն այն է որ հին տուումարները բոլորովին անկարգ և պակասաւոր ըլլալով, զանազան արդեանց գումարները գտնելու հնար եղած չէ։

3. Ամմարանի շահը հիւանդանոցի եկամուտ սահմանուած ըլլալով, անոր անտուկին առանձին հաշիւ ցուցընել պատշաճ չտեսնուեցաւ, Թէպէտև Խորհուրդը ուղեր ալ նէ չէր կրնար. վասն զի 57էն առջի հաշուետուումարները կնքոյ տակ դրուած ըլլալով, Խորհուրդն ասոր պատճառը չգիտնալուն համար կնիքը աւրել յարմար չդատեց։

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՈՒԵՏՈՒՄԱՐՆԵՐՈՒՆ ՄԵՋ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Աղբիւրը եկամտից		1854	1855	1856	1857	1858	1859
ՍՈՒՐԲ ՓՐԿՉԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ							
Թէսկիբէհանէ	Ղրշ.	136937	132000	200000	178325	176906	233206
Նշանաուք	„	43965	75929	108553	101304	100667	90635
Հիւանդանոցի սեփհական կալուածներէն	„	17642	25526	31360	34334	37605	40821
Հիւանդանոցի սեփհական վագրֆէն	„	...	...	...	30000	...	30000
Սուրբ Երուսաղէմի տարեկան նուէրէն	„	10000	...	...	50550	50000	50000
Արմաշի վանուց տարեկան նուէրը	„	..	...	·3000	·3000	·3000	...
Կտակեալ ողորմութիւնք	„	·7085	·2733	·2460	·9830	17807	·7721
Պատահական ողորմութիւնք	„	94472	105468	127005	84156	198682	59732
Սուրբ Փրկչի և Սուրբ Յակոբայ եկեղեցիներէն	„	·4871	·6392	·1823	13095	24983	11134
Հիւանդանոց ընդունվողներէն գրան ծախք և ամսական	„	24909	26556	35968	88950	155451	90579
Տէրութեան շնորհած հաց և միս	„	...	...	...	...	...	...
Տաղանց նուիրած միսին գինը	„	...	...	...	...	14525	17755
Ջանազան եկամուտք	„	20552	30604	22815	·9659	61627	144114
Մոմպանի շահը	„	32000	28000	71799	63782	56653	79247
	Գումար	392433	433208	612583	666985	897906	854944
ՏՆԱՆԿԱՑ							
Ազգային տուրքը	Ղրշ.	...	...	...	284399	33389	159368
Սուրբ Երուսաղէմի տարեկանէն	„	...	...	...	230810	...	51711
Տնանկաց սեփհական կալուածներէն	„	...	...	...	·9250	10660	11330
Կտակեալ ողորմութիւնք	„	...	...	...	·2310	·6300	·2070
Պատահական նուէրը	„	...	...	...	·5478	38609	32635
Ջանազան	„	...	...	...	·9700	72467	158547
	Գումար				541947	161425	413661
ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ							
Պոլսոյ եկեղեցիներէն և գաւառաց առաջնորդներէն տարեկան							126520

Այս եկամուտներուն ամենն ալ (որուն մէջ չդրուիք 1860 տարեցոյն մինչև նոյեմբեր 1 ունեցած արդիւնքը) Ազգին՝ Հիւանդանոցը, Աղքատները, Դպրոցներն ու Պատրիարքարանը վայելեր են. սա տարբերութեամբ միայն՝ որ յիշեալ Թուականին, մէկ միլիոնի չափ պարտ, և փոխրիկ գոնար մը առնելէ ներկայացան Ազգային Ելմտական Խորհուրդին։

Բայց պարտքերուն ամենն ալ կանոնաւոր հաշիւ եղած և պարտատերց ամենուն ձեռքը մուրհակ կամ տոմսակ յանձնուած են արդեօք, ոչ. անանկներ կան որ պահանջատէրներուն մէջ արյանագրուած էն պարբերուրի՝ ոնի։ Ասոնց ամենն ալ Խորհուրդը քննելու և ստուգելու յօժարամտութիւն ունէր, բայց որովհետև ասկէ օգուտ քաղելու համար, կանոնաւոր գոնար և վճարելու պակ ունենալ պէտք էր, երկուքն ալ չըլլալուն պատճառաւ՝ Խորհուրդը պարտաւորեցաւ առ ժամանակ մի այս քննութիւնն ալ ձգել, և պարտքը Ազգին յայտնելով, անոր դարմանը խնդիր ընել։ Ի՞նչ պատասխանեց Ազգը. — Հաւասիկ 1860 Նոյեմբեր 4 ին Ազգային Ընդհանուր Ժողովոյ որոշումները։

1°. Տնանկ աղքատաց տրուելու ողորմութենէն մնացած պարտքը որ 155,100 ղուրուշ է, Ազգային պարտուց գումարէն վար պիտի զարնուի, և Սահմանադրութեամբ աղքատաց համար ուրիշ անօրէնութիւններ առաջարկուած ըլլալով այս պարտքը պիտի չվճարուի։

2°. Սուրբ Երուսաղէմի Միաբանութենէն 600,000 ղուրուշ փոխ պիտի առնուի. և տարուէ տարի վճարելիք 120,000 ղուրուշ տուրքէն 30,000 ղուրուշ վար երթալով՝ քսան տարվան մէջ պիտի վճարուի։

3°. Ազգին երեւելի ընտանիքներէն գոնէ հինգհարիւրական ղուրուշ նուէր պիտի հաւաքուի։

4°. Յմեն տեղ ստորագրութիւններ բացուելով՝ առանց չափ և սահման դնելու ապգասէր անձերէ ըստ կարեաց և ըստ ազգասիրութեան իւրեանց կամաւոր նուէր պիտի խնդրուի։

5°. Քան զուրուշնոց անդորրագիրներ հանելով, ստակ պիտի ժողվուի. անդորրագիրները՝ ժամանակին Ազգային տուրքը վճարելու համար արժէք ունենալու պայմանաւ։

Բ.

Էջմիածնի Խորհրդին 1860 Նոյեմբեր 18էն մինչև 1861 Մարտ 1 ըրածներուն յայտագրութիւնը։

Ինչպէս արդէն ծանուցինք, Խորհուրդն իր հնգամեայ պաշտօնատարութեան մէջ կրկին ընթացք բռնելով պարտաւորուած ըլլալով, երկուքին ալ յայտագրութիւնը զատ զատ պէտք է ներկայացնել։

1°. 1860 Նոյեմբեր 18էն մինչեւ Նոյն տարուան Դեկտեմբերի վերջը

Այս քառամսեայ շրջանին մէջ Էջմիածնի Խորհուրդը հիմնական նոր կարգադրութիւն ընելու պատեհութիւն և յարմարութիւն չտեսնելով, որոշեց հին ընթացքով գործը շարունակել մինչեւ նոր տարուոյն սկիզբը. և միայն Էջմիածնի օրինաւոր գործածութեանը և կանոնաւոր տումարակալութեանը հսկելով, պարտուց համար ազգովին եղած անօրէնութեան գործադրութեանը փոյթ տարաւ։ Այս նպատակաւ Խորհուրդը՝

Ա՞ռաջին՝ Հիւսանդանոցի, Տնանկաց, և Մոմարանի Մնաւորներուն տումարները զատ զատ շարունակել տալով, միանգամայն Ազգային բոլոր Եկամուտներին

եղած արդիւնքը, և ծախուց ամենն ալ կանոնաւոր դեկ պոստի մէջ ամփոփել հարկաւոր դատեց Նոյեմբեր 1էն մինչեւ Դեկտեմբեր վերջ։

Հրիրդ՝ Իր մէջէն Գանձապետ մը և անոր օգնական մը որոշելով, Մամէեան Ազգային միայն գանձապահութիւն ընել որոշեց, և առժամանակեայ կանոն սահմանեց որ ե՞րբ և ուրկէ՞ սուակ գալու ըլլայ նէ, գանձապահը իր տումարին մէջ արձանագրելով պիտի առնէ և պահէ. բայց մնուցկէն սուակ հանելու համար, Խորհուրդին խնդիր պիտի ըլլայ, և որ խնդրոյ գրին վրայ ժողովը հաճութիւն տալով գանձապետն սուորագրէ նէ, գանձապահն այն սուակը պիտի վճարէ. ուրիշ կերպով բնաւ մէկուն սուակ պիտի չտրուի։

Իսկ պարտքերուն համար՝ Ազգային ընդհանուր ժողովին որոշմանցը համեմատ Բաղաքական ժողովը Սուրբ Երուսաղէմի փոխառութեան խնդրոյն հոգ տանելէն եաքը, 1860 Դեկտեմբեր 9ին Տնտեսական և Երկնային Խորհրդոց հետ համագումար ժողով ընելով որոշեց որ

1։ 1860 Նոյեմբեր 1էն մինչեւ 1861 Յունվար 1 Ազգային կեդրոնական Տնտեսութիւնը և Պատրիարքարանի ու Սուրբ Փրկչի մատակարարութեան եղանակը հին ընթացքով պիտի շարունակուի. և այսքան ժամանակի մէջ ինչ պարտք է. ելնելայ նէ, հինուց մնացած պարտքին հետ մէկտեղ պիտի գումարուի։

2։ Այս պարտքին վճարմանը համար մասնաւոր ժողովակ մը պիտի կազմուի ութը անդամով, որոնց երկուքը Տնտեսական Խորհրդէն, չորսը Երկնայնէն, և երկուքն ալ Բաղաքական ժողովէն պիտի տրուի։ Այս ժողովակը առանձին ժողովներ պիտի ընէ. և վերոյիշեալ պարտքին համար Ազգայիններէն մէկ կողմէն նուէր պիտի հաւաքէ, մէկ կողմէն ալ 1861 տարուոյն սուրբի դերհաշիւ. և անոնցմէ եղած արդիւնքովը և Սուրբ Երուսաղէմէն սպաս-

ուած փոխառութեան ստակովը, այն պարտքը բո-
լորովին վերցնելու խնամք պիտի տանի։ Այս յանձ-
նաժողովին անդամ ընտրուեցան՝

Քաղաքական ժողովին կողմէն

Համբարձումեան Սարգիս Աղա
Գրէնկեան Մկրտիչ Աղա

Տնտեսական խորհրդին կողմէն

Փանոսեան Գէորգ Աղա
Ալթունճեան Համբարձում Աղա

Երմոական խորհրդին կողմէն

Մոսիկեան Յակոբ Աղա
Զրաճեան Սարգիս „
Սարրաֆեան Վարդան „
Տէմիրճիպաշեան Էնովք „

Այս յանձնաժողովը որքան որ կանոնաւոր ատեան
կազմելու պատեհութիւն չունեցաւ ալ նէ, իրեն
յանձնուած գործէն հրաժարուած չըլլալէն զատ, ա-
նոր անդամներէն մէկ քանին մինչեւ այսօր պարտուց
վերաբերեալ գործերու մեծ աշխատութիւն տուին.
և այս վերջին օրերս Քաղաքական ժողովը Երմոական
խորհրդին առաջարկութեամբը որոշեց որ յանձնաժո-
ղովը իր պաշտօնին մէջ մնայ և շարունակէ անընդ-
հատ՝ մինչեւ որ իրեն յանձնուած գործը գլուխ տա-
նի, և կամ ազգովին նոր անօրինութիւն ըլլայ իրեն
համար. թէ և անոր անդամներուն վիճակ ելնէ գլա-
նուած ժողովէն կամ խորհուրդէն հրաժարելու։

Բայց այս պարտքի խնդրոյն ամենեն եւեալ հոգ տա-
նողն եղաւ Քաղաքական ժողովոյ անդամներէն Բա-
քալեան Միրիճան Համիրայն, որ պատուաւոր մէկ քա-
նի անձինք հետը առնելով Աղգիս երեւելի անձինքէն
մասնաւոր նուէր հաւաքելու գրութեան սկսաւ, և կ'ընէ
մինչեւ հիմայ, և պիտի շարունակէ մինչեւ եռքը, ինչ-
պէս որ խոստացաւ Քաղաքական ժողովոյն 1861 Մարտ

17 ի տեսանին, յանձն առնելով միանգամայն վերոյիշեալ յանձնաժողովին պաշտպանութիւնը, մինչեւ որ Ազգին հին պարտքը անհետանայ։

Այս տեղ յիշել կը պարտաւորիմք նաեւ ազգասէր երիտասարդաց ազգասիրական ջանքը, որով մէջերնին նուէր հաւաքելու և Ազգին հին պարտուց վճարմանը օժանդակելու համար Ազգային Վարչութեան յանձնելու որոշում բրած են. և արդէն ի բենց ու Վարչութեան մէջ յօդակապ ըլլալու նպատակաւ սահմանած յանձնաժողովին սկսած է գրութիւն ընել և նուէր ժողվել երիտասարդ պատանիներէն։

Այս գրութիւններով Ազգիս Մեծերէն և Երիտասարդներէն ընդունուած նուէրները Շլմտական Խորհրդին միջնորդութեամբը պիտի յանձնուին վերոյիշեալ պարտուց յանձնաժողովին, ինչպէս որ Խորհուրդը անոր արդէն յանձնած է Ազգին մինչեւ այս տարվան առաջին օրը տեսնուած պարտքերուն և առնելիքներուն ցուցակը. որպէս զի առնելիքներէն ու նուէրներէն եղած արդիւնքովը, պարտքերը վճարելու աշխատի ամեն մէկուն հաշիւը կատարելապէս քննելով և ստուգելով։ Այդ այս կերպով պիտի կարողանայ իր նպատակին հասնիլ։

Մենք հոս պարտքերուն և առնելիքներուն ցուցակը կը դնենք, որպէս զի այս հարցման պատասխանը ամեն մարդ ինքիրեն տալու կարող ըլլայ։

Ազգին՝ մինչեւ 1861 Յունվար 1 թեսոնուած պարտքը։

Ղուռուշ

124,566 Թիրեաքեան Պետրոս Ազգային (Պատրիարքարանի վերաբերեալ ծախքերու համար վաշխով փոխ առնուած).

112,000 Այվատեան Յոհաննէս Ազգային (Պալաթիոյ գետնին համար կտակողին պարտքերուն տրուած).

100,000 Նէվզուզեան Յովակիմ Ազգային (Նեմարա-

նի նորոգութեան համար անոր քով առանց եղած առակէն՝ ազգային պարտուց համար փոխ առնուած).

27,585 Մամարանի դրամագլխէն (Հիւանդանոցի ծախուց համար փոխ առնուած).

345,733 Սուրբ Փրկչի Հիւանդանոցին մասակարարութեան ծախքէն մնացած պարտք.

106,864 Սուրբ Փրկչի Հիւանդանոցին գործակալաց ամսականներու մնացորդը.

78,889 Պատրիարքարանի և գիւանատան Գործակալաց ամսականներէ մնացորդ.

118,484 Տնանկի Սնուցիչն կարօտեալ Դպրատանց ունեցած պարտքը.

33,364 Այլեւայլք։

1,047,476

Ասոնցմէ զատ՝ Ազգային Արչութենէն հին և նոր առնելիք պահանջներ այս օրերս երեւան կ'ելնեն կոր, բայց դեռ անոնց պահանջմունքը լինչ իրաւանց վրայ ըլլալը չ'հասկցուելով, ցուցակին մէջ նշանակել պատշաճ չտեսնուեցաւ։

Ղուռուշ Ռ.

49,671 Կալուածներէ.

40,000 Սուրբ Երուսաղէմի տարեկանէն (1860 տարվան հաշուէն).

12,500 Խասգիւղ Սուրբ Յոհաննես Եկեղեցիէն.

48,150 Այլեւայլք։

150,321

Այս առնելիքներուն կարգը չէ Այրարատեան Եկեղեցիներուն Մամարանի ունեցած պարտքը, որ 104,000 ղուրուշ է, և մամարանի դրամագլխին հաշուոյն մէջ դրուած է։

Երդ գործերն այս կերպով անօրինելով Երմոական խարհուրդը իր պաշտօնը հին ընթացքով վարեց մին-

չեւ Դեկտեմբերի վերջը. և տարւոյս առաջին օրը իր պաշտօնակատարութեան այս փոքրիկ շրջանին մէջ եղած Յլեմտից առւմարը ստուգելով կնքեց և վաւերացուց։

Այս առւմարին մէջ արձանագրուած է, ինչպէս արդէն իմացուցինք, մէկ կողմէն՝ ազգային Կեդրոնական Վարչութեան ձեռքը եկած եկամուտները. և միւս կողմէն՝ Խորհուրդին տնօրինութեամբը արուած ստակները։

1860 Նոյեմբեր 1էն մինչեւ Դեկտեմբերի վերջը

Եկամուտ եղած է 128,195 ղուրուշ 10 փարայ։
Ծախք " " 128,099 " 20 "

Տումարիս եկամտից կարգը 70,000 ղուրուշի ֆոռ-ռիֆ-ն մը կայ, որ Յլեմտական Խորհուրդին օրինաւոր ժողով ընելէն առաջ Ազգային Հիւանդանոցի և Պատրիարքարանի ամենակարեւոր և ստիպողական պիտոյքը հոգալու նպատակաւ առնուած է Նէվզուլեանց սենեակը գտնուած Ազգային Դեմարանի յատուկ դրամագրպլխէն՝ Քաղաքական Ժողովին փնտրինամբը և ֆոռ-կոպ-ը, և Յլեմտական Խորհուրդը Տնտեսականին ձեռօք կատարեալ խնայութեամբ գործածելով Ազգային պարտուց կարգը անցուցած է, ինչպէս որ վերի ցուցակին մէջ կը տեսնուի։

Այս տեղ անցեալ տարուան Յլեմտից յայտագրութիւնը կը վերջացնենք նոյն տարուան կատարեալ շրջանին մէջ Հիւանդանոցի, Տնանկաց, և Մոմարանի Սնուցիչներուն Եկամտից մասնաւոր ցուցակը ներկայացնելով։

Աղբիւրք եկամտից	1860
ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ	Դրամ
Թէսկիրէհանէ	136859
Նշանտուք	44735
Հիւանդանոցի սեփհական կալուածներէն	34722
Հիւանդանոցի սեփհական վագրիֆէն	...
Սուրբ Երուսաղէմի տարեկան նուէրէն	40000
Արմաշու վանուց տարեկան նուէրը	...
Կտակեալ ողորմութիւնք	5779
Պատահական ողորմութիւնք	61451
Սուրբ Քրիստի և Սուրբ Յակոբայ եկեղեցիներէն	9404
Հիւանդանոց ընդունվողներէ դրամ ծախք և ամսական	62823
Տէրութեան շնորհած հաց և միս	...
Տատեանց նուիրած միսին գինը	8050
Ջանազան եկամուտը	153083
Մոմարանի շահը	64492
գումար	621398

ՏՆԱՆԿԱՑ	Դրամ
Ազգային տուրք	75614
Սուրբ Երուսաղէմի տարեկանէն	58289
Տնանկաց սեփհական կալուածներէն	9320
Կտակեալ ողորմութիւնք	1490
Պատահական նուէրք	13573
Ջանազան	124561
գումար	282847

Իսկ Պատրիարքարանի Եկամուտը՝ նոյն տարվան Մայիս 15էն մինչեւ Դեկտեմբերի վերջը միայն հնար եղաւ իմանալ (արդի Արքազանին գահակալութեան օրէն ասդին). և ահա անոր ալ գումարը հոս կը նշանակեմք։

1860 տարուան Մայիս 15էն մինչեւ Դեկտեմբերի վերջ Պատրիարքարանի եկամուտը 71,524։

2: 1861 ՏԱՐՈՒՈՑՆ ՍԿԻԶԲԷՆ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ

Նոր տարւոյն հետ՝ Էջմիածնայ Խորհրդին վարչութիւնն ալ նոր կարգի մէջ մտաւ։ Երդէն Խորհուրդը գործի սկսած օրէն՝ Էջեւմտից գանուած վիճակին մանրամասնին դիտողութիւն ընելով, անոր տարամադրութեան անյարմարութիւնը նշմարեր, և կարգադրութեան համար պէտք եղած տնօրէնութիւնները գրի առեր, և Քաղաքական ժողովին ներկայացնելով՝ անոր հաճութիւնն ու գործադրելու հրամանը ընդուներ էր։ Ի՞նչ էր այս տնօրինութիւնները։

Սահմանադրութիւնը Ազգային Էջմիածնայ վիճակը տրամադրելու ատեն երկու տեսակ Սնոդ՝ սահմաներ է, մէկը Թաղական և միւսը Կեդրոնական։ Այս երկուքին Էջեւմտից զանազան աղբիւրները նշանակելով, առաջինը յանձներ է իւրաքանչիւր Թաղի իր Խորհրդին. իսկ երկրորդը Կեդրոնական Վարչութեան Էջմիածնայ Խորհրդին։ Բայց այս վերջինին՝ Կեդրոնական Սնոդին մոռոկարարութիւնն զատ, բոլոր Ազգային հասութից և ծախուց ընդհանուր Տեսչութիւն ալ պաշտօն յատկացուցեր է. ըսել է որ՝ Էջմիածնայ Խորհուրդը Մատակարար միանգամայն և Տեսուչ Խորհուրդ սահմանուեր է. (Տես, Սահմանադ. Յօդ. 52, 53)։

Խորհուրդը իր այս կրկին պաշտօնը ըստ օրինի կատարել յաջողելու համար, Տեսչութիւն մասը՝ որ ամենէն կարեւորն է, կատարելապէս իրեն պահելով, Մոռոկարարութիւնը՝ որ ամենէն դժուարն է, Սահմանադրութեան սկզբանց համեմատ աշխատութեան բաժանումը հիմն բռնելով՝ Տնտեսական Խորհրդին և ուրիշ պաշտօնակալաց օժանդակութեամբը դիւրացնել և ապահովել փութացաւ։

Ուստի Կեդրոնական Սնոդին երկու նոր ճիւղերով, Սուրբ Փրկչի Հիւանդանոցի և Ազգային Պատրիարքարանի մէջ մէկ մէկ մասնաւոր Սնոդ հաստատեց. և Կեդրոնականին սեփական եկամուտներէն երկուքին ալ յատուկ հասոյթ սահմանելով

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. Մեսրոպեանի անվան

որոշեց որ՝ Հիւանդանոցի ծախքը ո-ղջի իրեն Սնուկին մատակարարուի. Պատրիարքարանին և Դիւանատան ծախքն ալ Պատրիարքարանի Սնուկին։ Իսկ Կեդրոնական Մայր Սնոո-ին՝ Եկամուտներուն մնացորդովը, ու Ազգայնոց ընծայելու տուրքով և նուէրներովը, վերոյիշեալ ճիւղերուն և Պոլսոյ զանազան Թաղերու Սնուկներուն կարօտութեան ժամանակ՝ Բաղաքական Ժողովին տնօրինմամբը օգնութիւն ընելու յատկացուց. որով Ազգային Եւեմանից Տնտեսութիւնը՝ պարզ միանգամայն և ապահով վիճակի մէջ դրուեցաւ։

Հիւանդանոցի Սնուկին Տնոր-ին ու Համարքալը-ին-ը Տնտեսական Խորհուրդին առաջարկեց որ՝ կամ նա ինքնուին կատարէ, և կամ Հիւանդանոցի Հոգաբարձութեան յանձնէ. բայց անոր Տնօրէնո-ին-ը և Պապասխանապետ-ին-ը բոլորովին Տնտեսական Խորհրդին յանձնեց, և խնդիր ըրաւ որ ամեն ամիս Հիւանդանոցի Եւեմանից Հաշուեցոյց ժուռնալը առնէ, և ստուգելով ու վաւերացնելով իրկէ Եւեմական Խորհրդարան։

Պատրիարքարանի Սնուկին համար ալ որոշում ըրաւ որ Տնոր-ին ու Համարքալը-ին-ը մանաւոր ժողովակի մը յանձնուի, որուն անդամ ըլլան Պատրիարքական Փոխանորդը, Դիւանապետը և Բաղաքական Ժողովին տնօրինմամբը պէտք եղած Թուով անձինք. բայց Տնօրէնո-ին-ն ու Պապասխանապետ-ին-ը Պատրիարքին վրայ ըլլայ, և ամեն ամիս նոյն Սնուկին Եւեմանից Հաշուեցոյց ժուռնալը ստուգելով ու վաւերացնելով իրկէ Եւեմական Խորհրդարան։

Իսկ Կեդրոնական Սնուկին Տնոր-ին-ը ու Համարքալը-ին-ը Խորհուրդն իրեն սեփհականելով, Տնօրէնո-ին-ը յանձնեց Բաղաքական Ժողովին՝ որուն հաշիւ պիտի տայ որոշեալ ժամանակներ։

Այս կարգադրութիւնը Բաղաքական Ժողովն ընդունելէն ետքը Խորհուրդը վերոյիշեալ Սընուկներուն Հատոյթները սահմանեց սա կերպով.

Ս. ՓՐԿՉԻ ԱՋԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՍՆՏՈՒԿԻՆ ԵԿԱՄՈՒՏ

1. Թէսկիրէ Հանայի հասոյթը.
2. Նշանաւոր ժամանակ երկու կողմէն վճարուած ստակին կէսը, որ է Հայոց Հիւանդանոցի պատսպարելոց.
3. Մոմարանի շահը (160,000 դրամագլուխէն).
4. Ազգային տպարան.
5. Կալուածներ { Հիւանդանոցի սեփհական
   Տնանկաց "
6. Հիւանդանոցի սեփհական Վագըֆի արդիւնքը.
7. Հայ 37½ օրա, Օսմանեան Տէրութեան օրական շնորհածը.
8. Միս 15 օրա, նոյնպէս.
9. Տատեան Գերդաստանին նուիրած միսին գինը.
10. Ամբաշու Վանքին կողմէն Սուրբ Փրկչի յատակացեալ տարեկան նուէրը.
11. Կոտակեալ նուէրք ողորմութեան { Հիւանդանոցի յատուկ
    Տնանկաց "
12. Պատահական նուէրք, հացագին, հանդերձագին, կարասիք, և այլն.
13. Սուրբ Փրկչի մատան և Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ ներքին հասոյթք.
14. Օտանաւան հասոյթք { Հիւանդանոց ընդունուողներէն առնուած դրան ծախք և ամսական.
    Հիւանդանոցի մէջ ննջողներէն մնացած ստակ.
    Հին կարասեաց վաճառքէն եկամուտ.
    Մաքսիբեռնակիրներէ շնորհուած տարեկան նուէր, և այլն։

Վերոյիշեալ կալուածոց ցուցակը։

Ա. Հիւանդանոցի սեփհական կալուածք։

1. Մեծ նոր խանը սենեակ մը վարի յարկը, Փիշմիշեան Միքայէլ Ամիրայի վրայ.

2. ՍտառՃի խանը սենեակ մը վարի յարկը, Բինկեանցի Յարութիւնեան Դէորգ Աղայի վրայ.
3. Վալիտէ խանը երկու սենեակ վերի յարկը, Ն՛անիկ Ամիրայի վրայ.
4. Զինիլի խանը երկու սենեակ վերի յարկը, Խըլըճճեան Սարրաֆ Յոհաննէս Աղայի վրայ.
5. Սաֆրան խանը կէս սենեակ վարի յարկը, Փիշմիշեան Մինքայէլ Ամիրայի վրայ.
6. Խըզլար աղասի խանը կէս սենեակ վերի յարկը, Փիշմիշեան Մինքայէլ Ամիրայի վրայ.
7. ՄախասՃիներուն մէջ սափրիչի կրպակ մը, Բարսեղեան Ստեփան Աղայի վրայ.
8. Հասան փաշա խանի ետեւը փողոմաՃիի կրպակ մը, Մահտեսի Եղրամ Ամիրայի վրայ.
9. Հասան փաշա խանի ձախ կողմը կրպակ մը, Մահտեսի Եղրամ Ամիրայի վրայ.
10. Հասան փաշա խանի աջ կողմը կրպակ մը, Մահտեսի Եղրամ Ամիրայի վրայ.
11. Ոսկերիչներուն մէջ ոսկերչի մը կրպակ, Ն՛արտաբաղետ Յոհաննէս Ամիրայի վրայ.
12. Սուլթան Պայազիտ Ի-ԼԷՆԴՃիի կրպակ մը, Մահտեսի Պօղոս Աղայի վրայ.
13. Պէշքիթաշ Ը-Պ-ԳՃի Յակոբի տանը կէսը, Ավատեան Յոհաննէս Աղայի վրայ.
14. Թէսկիրէխանէյի փողոցին մէջ տուն մը, Փիշմիշեան Մինքայէլ Ամիրայի վրայ.
15. Խումխաբուլի դուրսը տուն մը, ՊասմաՃեան Մահտեսի Կարապետ Աղայի վրայ.
16. ԱէրէթՃի խանի կէսը, Եղրամեան Դէորգ Պէյի վրայ.
17. Զինիլի խանի Դ-ԼԷ ԷԻՍԷՆ (25 էն 5ը), Մարգարեան ՍտուաՃատուր և Մարտիրոս Աղայից վրայ.
18. Փրկչին մէկ կողմը պարտէզ մը, Փիշմիշեան Մինքայէլ Ամիրայի վրայ.
19. Փրկչին մէկ կողմը ԷՆՃԷԼԷԻ Դ-Ը, Փիշմիշեան Մինքայէլ Ամիրայի վրայ.

20. Փրկչին դիմացը այգի մը, Փիլիպեան Միքայէլ Ամիրայի վրայ.

21. Ն՛արտարապետ Ամիրայի Պալբիսլայի էֆրէնդի տաբեկան վարձու գինը.

22. Սաքսըլը փլած խանը երկու սենեակի ՀԷՊԷՆ, Ռէնկցի Յարութիւնեան Գէորգ Աղայի վրայ.

23. Թիրեաքի ջրլը վերաբուժի կրպակ մը, Խօրասանճեան Պետրոս Աղայի վրայ.

24. Խասգիւղ Ռի-Ռի-նճի- Մալխասի տունը, Ռինկեանցի Յոհաննէս Աղայի վրայ.

25. Հասան փաշա խանը վերի յարկը երկու սենեակ, Հանըմ օղլու Մանուկեան Յոհաննէս Աղայի վրայ.

26. Պալաթիոյ սանդրգճիներուն մէջ գետին մը, Այվատեան Յոհաննէս Աղայի վրայ.

27. Օէյրինէկի մը Այվալըխի Նառը գիւղը, Մաքսուտ Ամիրայի վրայ.

28. Ջաղլըն ոսկերիչի մը ՀԷՊԷՆ, Միրիճան Ամիրայի վրայ.

29. Սամաթիա տուն մը, Կի-մի-ջի- Գասպար Աղայի վրայ։

Բ. Տնանկաց սեփական կալուածք։

1. Մեծ նոր խանը միջին յարկը սենեակ մը, Խօրասանճեան Պետրոս Աղայի վրայ.

2. Եաղճի խանը վերի յարկը սենեակ մը, Սախայեան Մարտիրոս Աղայի վրայ.

3. Եաղճի խանը վարի յարկը սենեակ մը, Սախայեան Մարտիրոս Աղայի վրայ.

4. Եաղլըխճի խանը վերի յարկը սենեակ մը, Ռինկեանցի Յոհաննէս Աղայի վրայ.

5. Ռիւբքիւ խանը վերի յարկը սենեակ մը, Խօրասանճեան Պետրոս Աղայի վրայ.

6. Սաֆրան խանը վարի յարկը կէս սենեակ, Սախայեան Մարտիրոս Աղայի վրայ.

7. Ալի փաշա խանի դուռը կրպակ մը, Խօրասանճեան Պետրոս Աղայի վրայ.

8. Գինձանձինեբուս մէջ հաղորդ մը, Եբրահեան Գէորգ Պէյի վրայ։

Կոակիեալ Նո-Էրթ ողբրմո-ելիեան։	Դրամ։	Ցորեն։	Գինեպտ։	Ոչխար	Գումար։
1 Խաչատուր աղայի ճէվահիրճեան	120	80	40	—	240
2 Տէր Յարութիւն քահանայի Աւէտարանչաց	30	30	30	25	115
3 Եղեսաբէթ տիկնոջ սափրիչ Գէորգայ	20	—	—	—	20
4 Գէորգ սափրիչի	20	—	—	—	20
5 Տէր Յարութիւն քահանայի երիցակնոջ	30	30	30	25	115
6 Զաքար աղայի Թիւրխիւրեան	40	40	30	—	110
7 Միւռաճեան Եղիսէի կղզակցաց	20	30	10	—	60
8 Բէշտամարճի Մանուկ եղբօր	30	30	20	20	100
9 Սէրգիսի աղայի Թիւրխիւրեան	100	30	20	20	170
10 Մինա տիկնոջ Զարդհանէլի Մինաս աղայի	50	40	75	40	205
11 Յովսէփ աղայի Մինասեան	75	75	40	40	230
12 Դաղլը տիկնոջ	20	20	—	20	60
13 Թէքէճի Յարութիւն աղայի	144	2	72	—	288
14 Վարդուհեայ տիկնոջ Մէրգիսեան Գրիգոր աղայի	40	—	—	—	40
15 Միլանճի Սէրգիսի աղայի	100	100	—	—	200
16 Պէզազ Մարտիրոս աղայի	—	90	—	—	90
17 Պէզազ Սկրտիչ աղայի	—	120	—	—	120
18 Սրբուհի տիկնոջ Խաչատուրի Գաբրիէլ աղայի	40	30	—	30	100
19 Խաչատուրեան Միքայէլ աղայի տիկնոջ	40	—	—	20	60
20 Միքայէլ ամիրայի Փիլիպոսեան	140	—	—	—	140
21 Յովսէփ աղայի Երեքեղբայրեանց	—	300	—	—	300
22 Գէորգ աղայի Երեքեղբայրեանց	—	500	—	—	500
23 Յոհաննէս աղայի Երեքեղբայրեանց	—	120	—	—	120
24 Յոհաննէս աղայի Լէմենճեան	120	—	—	—	120
25 Դերձակ մահտեսի Մանուկ աղայի	—	30	20	—	50
26 Տէր Աստուածատուր քահանայի	—	10	10	—	20
27 Խաչուհի տիկնոջ Աբրահամեան Մարտիրոս աղայի	60	60	60	30	210
28 Յոհան աղայի Կամիկասարեան	150	—	—	—	150
29 Մահտեսի Գաբրիէլի	30	—	—	—	30
30 Պէզազ Նշան աղայի	50	50	—	—	100
31 Զիւլֆիւնար տիկնոջ Խաչատուրեան Աղասիի դստեր	60	—	—	30	90
32 Մահտեսի Թոմա աղայի	—	50	—	—	50
33 Պէզազ Նշան աղայի կղզակցաց	20	20	—	—	40
34 Մարիամ տիկնոջ Թոմասեան Յակոբ աղայի	100	100	25	50	275
35 Եսայեան Յոհաննէս աղայի կղզակցաց	300	—	—	100	400
36 Խաչատուրի Յարութիւն աղայի	—	40	—	40	80
37 Մարիամ տիկնոջ Թառան Փանուելեանի մահտեսի Մկրտիչ աղայի	—	60	—	—	60
38 Դերձակ մահտեսի Պետրոս աղայի	20	—	—	10	30
39 Յակոբ աղայի Մուրատեանեան	750	—	—	—	750
40 Մինրիճան ամիրայի Փափազեան	3000	—	—	—	3000
41 Եղիա աղայի Տէմիրճիպաշեան	150	—	—	—	150
42 Փիլիպոսեան տիկնոջ	30	30	—	—	60
					9068

Այս ցուցակներուս մէջ նշանակուած կղզուածներէն ու կամներէն զատ ուրիշներ ալ պիտի ըլլան, որ ժամանակ չեղաւ քննել և մանրամասն արձանագրել։

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՍՆՈՒՑԿԻՆ ԵԿԱՄՈՒՏ

1°. Պօլսոյ Եկեղեցիներէն առնուած դիւանական տուրքը։

2°. Առաջնորդներէն և Վանքերէն առնուած տարեկանը։

3°. Նշանաւորքի ժամանակ երկու կողմէն վճարուած ստակին կէսը, որ է Խաչագին։

4°. Հարաւեայց հրամանքի համար առնուած ստակը։

Պօլսոյ Եկեղեցիներէն առնուած Տուրքին ցուցակը։

1	Մայր Եկեղեցին	Դրշ.	5000
2	Պատատու	„	5000
3	Սամանթիոյ	„	4800
4	Իւսկիւտար Սուրբ Խաչ	„	2400
5	Իւսկիւտար Ս. Կարապետ	„	4800
6	Խասգիւղ	„	2400
7	Միջագիւղ	„	1200
			45600

8	Խարակէօմրիւկ	Դրշ.	1200
9	Ղալաթիոյ	„	1200
10	Բերայի	„	1200
11	Պէշիքթաշի	„	1200
12	Եէնի խաբա	„	600
13	Գատը գիւղ	„	600
14	Կէտիկ փաշա	„	600
	Գումար Ա. գաւազանի		45600
			22200

Առաջնորդներէն և վանքերէն առնուած տարեկանին ցուցակը։

1	Կարին	1420
2	Երզնկա	1750
3	Վան	1650
4	Քէմախ	420
5	Ամն	1020
6	Ճանիկ	670
7	Խաչիկ վանք	210
8	Կարմիր վանք	580
9	Հատան խաչ	480
10	Թանդարա	210
11	Ածապտէր	550
12	Սուրբ Երուսաղէմ	18000
13	Մուշի Սուրբ Կարապետ	12500
14	Աբմաշ	8700
15	Կեսարիա Սուրբ Կարապետ	7700
16	Թէքիրտաղ	5550
17	Սեբաստիա	4850
18	Եւդոկիա	5550
19	Ամասիա և Մարսուան	1800
20	Գաղատիա	5500
21	Էրզնէ	5400
22	Գրուտա	5050
23	Խարբերդու Խուլէ վանք	800
24	„ Դատեմա վանք	700
		80040

25	Խարբերդու Սօրսօրու վանք	700
26	Աբթմանէի վանք	700
27	Հալպին Խարտիատար	4600
28	Ադանա	4700
29	Կուտինա	4750
30	Արզնի Բարձրաբերդեաց	4600
31	Տիգրանակերտ	4400
32	Ուրֆա	980
33	Բարերդ	420
34	Կարս	500
35	Պանտրմա	4050
36	Տրապիզոն	4000
37	Բաղես	4400
38	Զարահանճաք Ալեսրի վանք	450
39	Ճնգուշ	500
40	Թէքման	560
41	Բաղէշ	4050
42	Զմիւռնիա	600
43	Սուրբ Դանիէլի վանք	650
44	Խոտէր	560
45	Սիս	5000
46	Աղթամար	4780
47	Եղիպտոս	950
	Գումար Ա. գաւազանի	80040
	Գումար Եկեղեցեաց տարոց	22200
		426520

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՅՐ ՍՆՏՈՒԿԻՆ ԵԿԱՄՈՒՏ

1°. Ազգային տուրք։
2°. Սուրբ Էջմիածնի Միաբանութեան կողմէն ազգային Ուսումնարանի համար նուիրուած տարեկանը։
3°. Առանց մասնաւոր տեղ մը որոշելու՝ Ազգին ընդհանրութեան անուանը եղած կտակեալ կամ պատահական նուէրներ։

Այսպէս ահա խորհուրդն՝ Ազգային Սնտուկին և անոր ճիւղերուն Հասոյթները, Տնտեսութիւնն ու Համարակալութիւնը, Տնօրէնութիւնը և Պատասխանատուութիւնը սահմանելով, նոր տարւոյն սկսելէն առաջ մասնաւոր ծանուցագրով հաղորդեց Տնտեսական Խորհրդին և Սրբազան Պատրիարքին. երկուքն ալ ընդունեցին, վասն զի երկուքն ալ չ'բողոքեցին. և երկուքն ալ եղած տնօրէնութիւնները գործադրելու սկսան նոր տարւոյն առջի օրէն, և կը շարունակեն մինչև այսօր։

Արդէն Տնտեսական Խորհրդին տնօրինմամբը՝ Հոգաբարձութեան ժողովը անոր Սնտուկին կալուածոց տնտեսութիւնը կը հոգայ, և Հասոյթներն առնելով ուղղակի Հիւանդանոցին ծախքը կը մատակարարէ։ Նոյնպէս Սրբազան Պատրիարքը Պատրիարքարանի Սընտուկին Էկամուտ յատկացած հասոյթները կ'ընդունի, և անով ուղղակի Պատրիարքարանի ծախքը մատակարարելու վրայ է։ Բայց այս երկու սնտուկներուն, Յունվար և Փետրվար ամսոց հաշուեցոյց ծոռանները մինչև յայտագրոյս պատրաստուելու օրը հասած չըլլալուն, Էջմիածնի Խորհուրդս ալ այսօր անկարող է յիշեալ ամիսներուն հաշիւները իր համարառու Ժողովին ներկայացուցնել, ինչպէս անկէ առջի ամիսներուն ներկայացուց։ Բայց համոզուած է որ ասոր պատճառը՝ գործոյն սկզբնաւորութեան դժուարութիւնն ու ժա-

մանակի կարճութիւնն է. և ըստ որում վերոյիշեալ անօրէնութիւնները գործադրուած են. խորհուրդը աներկմիտ կը յուսայ որ գործերը ամեն մասամբ կարգադրուելուն պէս, քիչ մ'ալ գործակալներն հիննալով, ամեն բան դիւրութեամբ կընթանայ. և նոյն ժամանակ ամեն ամիս իրարու ետեւ առանց յապաղման հաշուեցոյցները կը հասնին Շլմտական խորհրդարան. որով խորհուրդն ալ տարուայս վերջը բոլոր տարուան հաշիւները կանոնաւոր և մանրամասն կրնայ ներկայացնել Բաղաքական ժողովին։

Իսկ կեդրոնական մայր Անտուկը՝ այս վերջին երեք ամիսներուն մէջ ոչ ստակ մը մտած է և ոչ ելած. վասն զի անտուկին ՏՈՒՊՔ՝ Սուրբ Հրուսաղէմի տարեկանն ու Ազգային տուրքն ըլլալով, մինչեւ այսօր ոչ մէկը եկած է և ոչ միւսը սահմանուած։ Արդէն խորհուրդը Ազգային տուրքին հաստատութեան նախապատրաստութիւնները տեսաւ. Այրաքաղաքիս ամեն Թաղ մասնաւոր անձինք խրկուելով, տուրքի համար կանոնաւոր ազգահամարի տումարներ տնօրինուելու վրայ է. բայց Թաղական խորհրդոց շատը նոր ընտրուած, տեղ տեղ ալ տակաւին խորհուրդ բնաւ իսկ սահմանուած չըլլալով, տումարներուն կարգադրութիւնը շուտով կատարել հնար եղած չէ։ Միւս կողմէն ալ Անտուկին ելք սահմանուած ըլլալով Հիւանդանոցի, Պատրիարքարանի և կարօտեալ Թաղերու Անտուկներուն օգնութեան ծախքը. ասոնց մէկին ալ դեռ կատարելապէս կարգադրուած չըլլալուն համար՝ որի՞ ինչ օգնութիւն ըլլալիքը մինչեւ այսօր չկրցաւ սահմանուիլ, և հետեւաբար մայր Անտուկը մարդու ստակ տալու կարօտութիւն չունեցաւ։

Ասոնց ամենը խորհրդին Տապակարարութեան վերաբերեալ պաշտօնին համար էր։ Տեսնենք հիմայ Տեսչութեան մասին ինչ տնօրէնութիւններ եղաւ մինչև այսօր։

Խորհուրդը Սահմանադրութեան տնօրինմամբը՝ պարտաւորեալ է,

Ա. Ազգին բոլոր Հասութից և Օրախուց ընդհանուր Տեսչութիւն ընել, ծախուց օրինաւորութիւնը ստուգել, և Բ. ամեն ըրած դիտողութիւնները ու տեսած հաշիւները Բաղաքական ժողովին հաղորդել. մէկ խօսքով՝ Խորհուրդը համարոտ է, միանգամայն և համարապտ։

Այս փափուկ և ծանրակշիռ պաշտօնը ըստ օրինի կատարելու համար Խորհուրդը առ այժմ սա կարգադրութիւնները ըրած է։

1։ Ազգին Թաղական մնաուկներուն և Կեդրոնական մնաուկին և անոր ճիւղերուն կանոնաւոր համարակալութիւն պիտի ըլլայ։

2։ Ամեն Թաղական Խորհուրդ՝ որոշեալ ժամանակներ իր Թաղի մնաուկին հաշուոյ պատճէնը պիտի տայ Եկեղեցական Խորհուրդին։

3։ Ամեն ամիս Տնտեսական Խորհուրդը՝ հաշուեցոյց ժուռնալ պիտի ընդունի Հիւանդանոցի Հոգաբարձութեան ժողովէն, և ստուգելով ու վաւերացուցնելով պիտի խրկէ Եկեղեցական Խորհրդարան։

4։ Ամեն ամիս Արբազան Պատրիարքը՝ Պատրիարքարանի մնաուկին հաշուեցոյց ժուռնալը անոր Տընտեսութեան ժողովակէն առնելով պիտի քննէ, ստուգէ և վաւերացուցնելով պիտի խրկէ Եկեղեցական Խորհրդարան։

5։ Վերջապէս Եկեղեցական Խորհուրդը՝ Կեդրոնական մնաուկին հաշիւը պիտի տայ Բաղաքական Ժողովին. և որոշեալ ժամանակներ՝ անոր ճիւղերուն ու Թաղական մնաուկներուն տնտեսութեանը վրայ ըրած դիտողութիւններն ալ պիտի ներկայացնէ յայտագրով։

Այս կարգադրութիւնները Բաղաքական Ժողովը ընդունելէն և գործադրութեան հաճութիւն տալէն վերջը, Խորհուրդը անմիջապէս Տնտեսական Խորհրդին և Արբազան Պատրիարքին մասնաւոր ծանուցագրով հաղորդեց։ Բայց Թաղական խորհուրդներուն կազմութիւնը՝ նոր, և տեղ տեղ ալ պակաս ըլլալով,

ամեն թաղ Պատրիարքական շրջաբերական նամակ. և յատկապէս տպեալ հանրացոյց պատկերներ խրկելով խնդիր ըրաւ որ՝ 1857—58—59 տարիներուն մէջ ամեն մէկը իր Եկեղեցւոյն և Դպրոցներուն, Աղքատներուն և Դպիրներուն ստացած արդիւնքը նշանակէ, և ամեն մէկուն սեփհական կալուածները և ունեցած դրամները արձանագրելով խրկէ Էջմիածնայ Խորհրդարան. որպէս զի ասկէ ետեւ անոնցմէ հաշուեցոյց ժուռնալ առնելու ատեն՝ Խորհուրդը ամեն մէկուն Էջմիածնայ վիճակին նախանձաւորութիւն ըլլայ, և համեմատութեան չափ մը ունենայ իր ձեռքը։

Բայց ինչպէս վերը Պատակարարութեան մասին ծանուցինք, Տեսչութեան վերաբերեալ անօրէնութեանց գործադրութիւնն ալ մինչեւ այսօր կատարելապէս չը յաջողեցաւ։ Տակաւին թաղերէն ուղուած եկամտից հանրացոյց պատկերներուն տասնէն մէկը հաղիւ հասած է Էջմիածնայ Խորհրդարան։

Հոս կը վերջանայ Էջմիածնայ Խորհրդին հնգամեայ պաշտօնատարութեան յայտագրութիւնը, որ կրնայ ամփոփուիլ սա խօսքով. «Էջմիածնայ Խորհուրդը իր Սահմանադրական կրկին պաշտօնը ճանչցեր, և ըստ կարի կատարելու համար պատշաճ եղած կարգադրութիւնները անօրիներ է. բայց կատարելապէս գործադրութեանը ոչ պարագայներն օգներ են և ոչ ժամանակը ներեր է»։ Ուստի Բազմաբական ժողովին նեղոզամտութեանը յուսալով, կ'անցնի ներկայ տարւոյս համար ընելու առաջարկութեանցը։

Գ.

Ներկայ Տարեցոյց համար Էջմիածնի Խորհրդին առաջարկութիւնները։

Էջմիածնի Խորհուրդը՝ որ Եղեւմտից տնտեսութեան մէջ սակաւատեւ փորձառութեամբ փոքրիկ վարժութիւն մը ունեցաւ, կը կարծէ որ Ազգիս Էջմիածնի վիճակը վերականգնելու, և արդարակշիռ ընթացքով տարուէ տարի յառաջադէմ զարգացնելու համար՝ Ազգային Վարչութիւնը պէտք է այժմէն վճռաբար որոշէ որ «մինչեւ ազգին ունեցած պարտքը «կատարելապէս չ'վճարուի, նոր ծախուց դուռ պիտի «չ'բացվի, և ազգային ամեն Հաստատութիւն իրեն «յատկացած եկամուտովը բաւականալով, նոր պարտք «գոյանալու առիթ պիտի չ'տրվի»։

Այս վճիռը տրուելուն պէս կը մնայ միայն Ա. — Հին պարտուց վճարման հնարը գտնել և Բ. — Նոր պարտք ջնջելու համար Ազգային Հաստատութեանց տնտեսութիւնը բարեկարգել։

Առաջինին համար՝ 1860 Նոյեմբերի 4ին Ընդհանուր Ժողովոյ որոշումները յիշեցուցնելէն ետքը, Էջմիածնի Խորհուրդը սա առաջարկութիւնը միայն կ'եւելցունէ, «Հին պարտուց վճարմանը համար սահմանուած յանձնաժողովը մնայուն պահել, և կամ նոյն պաշտօնով նոր յանձնաժողով մը կազմել, և Էջմիածնի ու «Տնտեսական Խորհուրդներէն ալ, բայց անոնց խորհրդակից օգնականութեամբը վարելու, և Էջմիածնի միջնորդութեամբը Բաղաքական Ժողովին հաշիւ տալու պայմանաւ՝ պարտուց քննութեան և վճարման հոգն ու խնամքը անոր յանձնել»։

Երկրորդին համար՝ Խորհուրդը կ'առաջարկէ որ «Բաղաքական Ժողովը Տնտեսական և Հաշուագիր անձինքներով Տնտեսական ու Էջմիածնի Խորհուրդները «կիսով չափ նորոգելէն ետքը, անոնց խորհրդակցու-

«թեամբը Ա.— Սուրբ Փրկչի Հիւանդանոցին՝ Սահմա-
«նադրութեան տնօրինած կերպովը կատարելագործ-
«գադրուելուն հոգ տանի. Բ.— Ազգային Դիւանա-
«տունը կարգադրէ, և անոր ու Պատրիարքարանի ամ-
«սականները սահմանէ. և Գ.— Այրաքաղաքիս թաղե-
«բուն մէջ դեռ պակաս եղած թաղական խորհուրդ-
«ները ժամ յառաջ կազմել տալով, ամեն մէկուն բար-
«ւոք մատակարարութեանը, և ամենուն մէկէն աչա-
«լուրջ հսկողութեան ըստ օրինի կատարուելուն խը-
«նամք տանի »։

Այս տնօրէնութիւնները անթերի գործադրուելու ըլլան նէ, Եկմական Խորհրդին կը մնայ վերոյիշեալ մատակարարութիւնն և պետութիւնն կարգադրութիւնները անփոփոխ պահել. և Համարատութիւնն մասին արթուն հսկողութիւն ընելով համարատութիւնն ժամանակ հաւատարիմ հանդիսանալու փոյթ ունենալ։

Հիմա մէկ քանի խօսք ալ առաջիկայ տարւոյս Եկեմոնից զուգակշռութեան խնդրոյն վրայ ընեմք, և փութամք Յայտագիրնիս վերջացնել։

Սահմանադրութիւնը՝ Եկմական Խորհուրդին պարտաւորութիւն կը դնէ, ամեն տարի տարեգլխէն երկու ամիս առաջ հետեւեալ տարւոյն եկեմոնից զուգակշռը սահմանել, և ցուցակը ներկայացնել Բաղաքական Խորհրդին։ (Տես, Սահմ. Յօդ. 55։)

Այս խնդրոյն վրայ Խորհուրդին դիտողութիւնը սա է որ՝ ըստ որում առաջիկայ տարւոյն եկամուտն ու ծախքը հիմակվընէ սահմանելու համար՝ ամեն բան արդէն կարգադրուած և պիտոյքը ճանչցուած, ու ծախքը ըստ մեծի մասին որոշուած ըլլալու է. և որովհետեւ մինչեւ այսօր ոչ Սուրբ Փրկչի Հիւանդանոցին կարգադրութիւնը ամենայն մասամբ կատարուած է, ոչ ազգին Դիւանատունը սահմանուած, և ոչ Պատրիարքարանի ծախքը ու գործակալաց ամսականները որոշուած. դեռ թաղերուն ամեն մէկին վիճակը ճանչցուած չէ, և թէ որո՞նք են կարօտները, և կարօտու-

թիւնին ինչով կը լրցուի, տակաւին չէ հասկըցուած։ Այս պատճառներով խորհուրդը չիկրնար այսօրվնէ առաջիկայ տարւոյս ծախքն ու եկամուտը ճշդիւ սահմանել, բայց ենթադրութեամբ հաշիւ ընելով կը կարծէ՝ որ ծախուց համար 1,320,000 ղուրուշ պէտք է, և հետեւաբար այսքան եկամուտ ճարելու ջանք ընելու է։

Ծախուց Բաժանումը։

	Տարեկան ղուշ։
Սուրբ Փրկչի Հիւանդանոցին (թէ որ Սահմանադրութեան համեմատ կարգադրուինէ, ինչպէս որ ըլլալու վայելի)	600,000
Ազգային Դիւանատան և Պատրիարքարանի	240,000
Կարօտեալ Թաղերուն օգնութեան համար	60,000
Ազգային դաստիարակութեան նպաստելու համար	240,000
Պատահական ծախուց համար.	80,000
Պահեստի դրամ (Սահմանադրութեան 52Դ յօդուածին հետեւելով Ազգային դրամագլուխ մը գոյացնելու համար)	100,000
	1,320,000

Այս ծախքը գոցելու համար Ազգային Վարչութիւնն ունի

Սուրբ Փրկչի Հիւանդանոցին Եկամուտները որ կրնայ ենթադրուիլ	600,000
Պատրիարքարանի Մնաուկին Եկամուտները	200,000
Կեդրոնական Մայր Մնաուկին Եկամուտներէն՝ Սուրբ Երուսաղէմի տարեկանը*	120,000
	920,000

* Ծանօթութիւն։ Սուրբ Երուսաղէմի նուիրած տարեկանը 120,000 ղուրուշ է. բայց 1849 ին Միաբանութենէն 500,000 ղուրուշ փոխ առնը-

Ասել է որ	Ղուռուշ
Օսմիք	1,320,000
Եկամուտ	920,000
Տարբերութիւն	400 000

Ահա այս տարբերութեան դումարն է որ Ազգը լցունելու պիտի աշխատի. և ասոր ալ փոխարէն Խորհուրդն ուրիշ ցուցընելիք չունի՝ այլ 1861 տարվան Ազգային տուրքը։ Ուրեմն պէտք է հիմակվընե որոշել որ "տարուս մէջ 400,000 ղուրուշ Տուրք պիտի ժողովվի"։

Ազգային Տուրքին բաշխման և հաւաքման Հղանակը Բաղաքական Ժողովը պիտի որոշէ և Ընդհանուր Ժողովը պիտի հաստատէ, կ'ըսէ Սահմանադրութիւնը. այս պատճառաւ Եշմիածնական Խորհուրդը պիտի ներկայացունէ Ժողովին, Տուրքի բաշխումը դիւրացնելու համար պատրաստած տումարը, որուն մէջ Ազգայինք հինգ կարգ որոշուած են։

Ա. Տուրք վճարելու անբաւական վիճակեալ անձինք.

Բ. Տարեկան 20—30 ղուրուշ տուրք վճարելու կարողութիւն ունեցողք.

Գ. Տարեկան 50—60 ղուրուշ տուրք վճարելու կարողութիւն ունեցողք.

Դ. Տարեկան 100—120 ղուրուշ տուրք վճարելու կարողութիւն ունեցողք.

Ե. Տարեկան 120 ղուրուշէն աւելի տուրք նուիրելու բաւականութիւն ունեցող յատուկ անձինք, որոնց մէջ կան որ մինչև 7500 ղուրուշ տարեկան նուէր տալու սովորութիւն ունին։

ելը է, ամէն տարի 40,000 ղուրուշ իր նուիրած տարեկանէն վար դնելով վճարելու պայմանաւ. ուստի անկէ մինչև այսօր տարին միայն 80,000 ղուրուշ եկած է, բայց 1861 ի սկիզբը այս պարտքը վճարուած ըլլալով, ասկէ ետքը 120,000 ամբողջ պիտի գայ։

Ահա Յայտագրութիւնս կը կնքեմք յայտնելով Խորհուրդին գոհունակութիւնը ազգային բոլոր Խորհրդոցն և Խորհուրդներէն, և մասնաւորապէս կը յիշեմք Սրբազան Պատրիարքին և Քաղաքական ժողովին յօժարամիտ սիրով մեր պաշտօնակատարութեան ժամանակ ըրած օժանդակութիւնը, որուն համար հրապարակաւ շնորհակալութիւն մատուցանելով մնամք ազգային բարեկարգութեան և յառաջադիմութեան անձնանուէր ծառայք

ԵԼՄՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԱՆԴԱՄՔ

Ս. ԱՍԼԱՆԵԱՆ ատենապետ
Ա. ԵՍԱՄԱՃԵԱՆ
Գ. ՃԱՓՃԱՓԵԱՆ
Մ. Մ. ՄՈՒՐԱՏԵԱՆ
Յ. ՄՕՍԻԿԵԱՆ ատենադպիր
Գ. ՄԸՐՄԸՐԵԱՆ
Ս. ՁԸՐԱՃԵԱՆ
Վ. ՍԱՐՐԱՓԵԱՆ գանձապետ
Յ. ՏԱՄԱՏԵԱՆ
Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

1861 ԱՊՐԻԼ 1
Ազգային Պատրիարքարան Հայոց
Ի Կ. Պոլիս.

2013